**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի օգոստոսի 07-ին կնքված NԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

| | |
|---|---|
| Փոփոխության նկարագրություն՝ | կնքվել է լրացուցիչ համաձայնագիր |
| Փոփոխության հիմնավորում՝ | պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, պայմանագրի 8.15 կետը: |

Պատվիրատու՝ ***ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ***

07.08.2018 թ. կնքված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02 պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոց նախատեսելու վերաբերյալ

**համաձայնագիր № 1**

14 դեկտեմբեր 2018 թ.

ք. Երևան

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հայկ Թագեյանի (այսուհետև՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02» պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով 8.15 կետով սահմանված միջոցների հատկացումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին օգոստոսի 07-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02» պայմանագրի մասով հաստատել գնման ժամանակացույց և վճարման ժամանակացույց ըստ սույն համաձայնագրի հավելվածներ №№ 1-ի և 2-ի, որոնց միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ նշվող ապրանքատեսակի և դրա քանակի ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագրով նախատեսված դրույթները տարածվում են 2018 թ. օգոստոսի 07-ից կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների վրա:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից. 1-ին էջը՝ սույն համաձայնագիր № 1-ն է, իսկ 2, 3-րդ էջերը՝ սույն համաձայնագրի հավելվածներ №№ 1, 2-ն են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան

Ա. Վանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 19/67
Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16047808168200
ՀՎՀՀ 01232586
Տնօրեն՝ Հայկ Թագեյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
44 դեկտեմբերի 2018թ. կնքված
№ 1 համաձայնագրի
Հավելված N 1
07 օգոստոսի 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն* | ժամկետը<br>Մինչև 20.12.2018 թ. |
| 1 | 24951480 | Ֆերմենտատիվ պեպտոն Peptone bacteriological BI707 | Biomark laboratories Հնդկական | Ընդհանուր ցուցման սնուցող միջավայր, փոշենման ամորֆ զանգված է, սպիտակից մինչև բաց դեղնավուն երանգի: Պիտանելիության ժամկետը առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, ընդհանուր ժամկետը՝ նվազագույնը՝ 2 տարի, փաթեթավորումը՝ հերմետիկ տարաներով՝ 5 կգ կշռվածքներով, գործարանային հերմետիկ փաթեթավորմամբ և գործարանային պիտակավորումով, ունենա խմբաքանակի ծածկագիր և ապրանքանշային ծածկագիր, արտադրողի կողմից արտադրման ամսաթվի և պիտանելիության ժամկետի հստակ նշումներով: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին և/ կամ ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր):Խմբաքանակը կրի հստակ ծածկագիր, ամբողջությամբ լինի միատեսակ ( ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով): | կգ | 12,700.00 | 3,810,000.00 | 300.00 | Դ.Մալյան 37 | 15.00 |
| 17 | 33691163 | Արյունային ագարի հիմք/Կոլումբիա ագար BLOOD AGAR BASE (INFUSION AGAR) W/O BLOOD B014 | Biomark laboratories Հնդկական | Հոմոգեն դեղնավուն փոշի է, որից պատրաստված միջավայրը արյուն ավելացնելուց հետո օգտագործվում է ստրեպտոկոկերի, նեյսերիաների և այլ պահանջկոտ մանրէների աճեցման համար: Պատրաստի միջավայրը պահանջում է 5-10% դեֆիբրինացված մանրէազերծ արյան ավելացում: Պիտանելիության ժամկետի առնվազն 70% ի առկայություն մատակարարման պահին, ընդհանուր ժամկետը՝ 3-4 տարի, մինչև 0.5 կգ հերմետիկ, գործարանային փաթեթավորմամբ և պիտակավորմամբ տարաներով: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ԻՍՕ ստանդարտներին, ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): Խմբաքանակը ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով): | կգ | 35,000.00 | 140,000.00 | 4.00 | Դ.Մալյան 37 | 1.00 |
| 41 | 33121270 | Սկավառակներ լեղիով | ՌԴ | Սկավառակներ լեղիով, օգտագործվում են պնևմակոկերի տարբերակման համար, յուրաքանչյուր սկավառակը նախատեսված է 1 թեստի համար: Փաթեթավորումը՝ լինի հերմետիկ, գործարանային, յուրաքանչյուր փաթեթավորման մեջ առավելագույնը 100 սկավառակ: Պարտադիր է յուրաքանչյուր փաթեթավորման վրա խմբաքանակի ծածկագիրը, ապրանքշի անվանումը, ժամկետների հստակ նշումները և այլն: Պիտանելիության ժամկետը առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, նվազագույնը՝ 2 տարի, Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացված որակի հավաստագիր: Խմբաքանակը ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով): | սկավառակ | 90.00 | 67,500.00 | 750.00 | Դ.Մալյան 37 | 200.00 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 53 | 24321610 | Քիմիական մաքուր սախարոզ | ՁԺՀ | Ջոր սպիտակ փոշենման համասեռ զանգված, օգտագործվում է սնուցող միջավայրերի պատրաստման համար: Պիտանելիության ժամկետն առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին, փաթեթավորումը՝ առավելագույնը 2-ական կգ, հերմետիկ տարաներով և պիտակավորմամբ, ապրանքանիշի և խմաբաքանակների պարտադիր նշումներով, առանց կոշտ գնդերի գոյացման: Համապատասխանի որակին ներկայացվող միջազգային ստանդարտներին և ունենա որակի հավաստագիր (արտադրողի կողմից խմբաքանակին ներկայացվող հավաստագիր): Խմբաքանակը կրի հստակ ծածկագիր, ամբողջությամբ լինի միատեսակ (ժամկետի, արտադրողի և փաթեթավորման առումով): | կգ | 4,000.00 | 8,000.00 | 2.00 | Դ.Մալյան 37 | 1.00 |

1. Սառնարանային պայմաններ պահանջող բոլոր ծախսանյութերի մատակարարումը ապահովել համապատասխան պայմաններում՝ կից՝ ջերմային ռեժիմի ապահովումը հավաստող թեստերով:
2. Բոլոր ծախսանյութերի համար պարտադրվում է գործարանային փաթեթավորումը՝ անհրաժեշտ բոլոր տվյալների մակնշմամբ՝ ժամկետներ, խմբաքանակ, ծածկագիր, անվանում, բաղադրատոմս/պատրաստման եղանակ/կիրառման հրահանգներ և որակը հավաստող այլ տվյալներ, ինչպես նաև խմբաքանակին, փաթեթավորմանը ներկայացվող՝ արտադրողի կողմից տրված հավաստագիր:
3. Որակի ստուգում և/կամ համարժեքության լրացուցիչ գնահատում պահանջող ծախսանյութերի համար պահանջվում է մատակարարման և փաստաթղթերի ստորագրման միջև ժամանակ՝ մինչև 10 օր (առավելագույնը 14 օր՝որոշ ապրանքների մանրէազերծությունը որոշելու համար)՝ լաբորատոր մեթոդներով դրանց գնահատում կատարելու նպատակով, որն անպայման կներառվի պայմանագրի մեջ:

* Մատակարարվելիք ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, և բեռնաթափումը համապատասխան պահեստ, իրականացվում է Վաճառողի ուժերով և միջոցներով:

**ԳՆՈՐԴ**
**ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12**
**Երևանի թիվ 1 ՏԳԲ**
**Հ/Հ 900018004649**
**ՀՎՀՀ 02625503**
**Գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան**

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Արգումանյան 19/67**
**Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 16047808168200**
**ՀՎՀՀ 01232586**
**Տնօրեն՝ Հայկ Թագեյան**

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«11» դեկտեմբերի 2018թ. կնքված
№ 1 համաձայնագրի
Հավելված N 2
«07» օգոստոսի 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-55-02» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ այդ թվում | |
| | | | դեկտեմբեր 2018 թ. | Ընդամենը |
| 1 | 24951480 | Ֆերմենտատիվ պեպտոն<br>Peptone bacteriological BI707 | 190,500 | **190,500** |
| 17 | 33691163 | Արյունային ագարի հիմք/Կոլումբիա ագար<br>BLOOD AGAR BASE (INFUSION AGAR) W/O BLOOD | 35,000 | **35,000** |
| 41 | 33121270 | Սկավառակներ լեղիով | 18,000 | **18,000** |
| 53 | 24321610 | Քիմիական մաքուր սախարոզ | 4,000 | **4,000** |

ԳՆՈՐԴ
ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503
Գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արզումանյան 19/67
Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16047808168200
ՀՎՀՀ 01232586
Տնօրեն՝ Հայկ Թագեսյան
/ստորագրություն/
Կ.Տ